ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

_____Հայոց լեզվի և գրականության____
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուջյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __9__

«__23__» ____հունվար__ 2026թ.

ՀԼԳ/Բ-032 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-2»

ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **061101.00.6** Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **061101.02.6** Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Ինֆորմատիկայի բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության

Ուսուցման ձևը՝ Առկա

Կուրս/կիսամյակ՝ 1-ին կուրս, 2-րդ կիսամյակ

Դասախոս՝ Գայանե Պապյան

էլ. հասցե՝ mls152213@gmail.com

Վանաձոր- 2026թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    14.2. Հարցաշար
    14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

«Հայոց լեզու և գրականություն-2» առարկան ներառված է ***061101.02.6*** *Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա* կրթական ծրագրի ուսումնական պլանում՝ «Աշխարհայացքային և հաղորդակցական» կրթամասում: Առարկան բաղկացած է երկու առանձին առարկայական ծրագրերից, որոնցից առաջին կիսամյակը նախատեսված է «Հայոց լեզու», երկրորդ կիսամյակը՝ «Հայ գրականություն» առարկաների համար:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

2.1. **Դասընթացի նպատակն** է ուսանողների մոտ ձևավորել համակարգային պատկերացում հայ գրականության զարգացման շրջանների և դերի մասին հայ հասարակական մտքի ու արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում:

2.2. **Դասընթացի խնդիրներն են՝**

-ներկայացնել հայ գրականության զարգացման հիմնական շրջանները:

-վերլուծել հայ գրականության զարգացման վրա ազդող հիմնական գործոնները:

-բացատրել գեղարվեստական ստեղծագործության առանձնահատկությունները:

-պարզաբանել գրականության ժանրային համակարգը և գրական հիմնական ուղղությունները:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

Դասընթացի ուսումնասիրման համար ուսանողը պետք է ունենա նախնական գիտելիքներ հայոց լեզվից:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և կոմպետենցիաները.**

4.1. Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է.

Հասկանա՝

- Գրական գործընթացի առանձնահատկությունները:
- Գրականության ժանրային համակարգն ու գրական հիմնական ուղղությունները:

Իմանա՝

- Հայ գրողների ստեղծագործական ժառանգությունը:
- Հայ գրականության զարգացման առանձնահատկությունները:

Կարողանա՝

- Վերլուծել գրական ստեղծագործությունները:
- Բացատրել գրականության արժահամակարգային դրսևորումները համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներում:
- **Տիրապետի՝**
- Գրական ստեղծագործության վերլուծության մեթոդներին:

4.2. Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի հետևյալ կոմպետենցիաները.

ԳԿ1. Վերլուծելու և համադրելու ունակություն.

ՀԳԿ1. Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:

ԱԿ6. Կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները:

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքներն ու հմտությունները շրջանավարտի մոտ ձևավորում են ընդհանուր աշխարհայացքային պատկերացումներ և հաղորդակցական հմտություններ, որոնք հետագայում նա կարող է օգտագործել ինչպես միջանձնային հաղորդակցական, այնպես էլ հանրային հաղորդակացական միջավայրերում՝ գիտակցելով հայ մշակույթի համակարգում հայ գրականության դերի կարևորությունն ու անհրաժեշտությունը:

6. **Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը	**2 կրեդիտ / 60 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Գործնական աշխատանք	28

Ինքնուրույն աշխատանք	32
Ընդամենը	60
Ստուգման ձևը՝	Ստուգարք

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u> .
   - Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով:
   - **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

     Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝
     - <u>Ռեֆերատ</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
     - <u>Էսսե</u> – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
     - <u>Ինքնուրույն աշխատանք համացանցում</u> – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
     - <u>Աշխատանքային տետր</u> – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
     - <u>Զեկույց</u> – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
8. **Դասավանդման մեթոդներներն են՝** գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:
9. **Ուսումնառության մեթոդներն են՝** թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների	
		գործնական աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր նկարագիր	2	2
2.	«Սասնա ծռեր» էպոսը	2	2
3.	Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», ֆրիկ, քնարերգությունը	2	2
4.	Միջնադարյան տաղերգություն, հայրեններ	1	2
5.	Խ. Աբովյանը և լուսավորական շարժումը	1	2
6.	Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը	1	2
7.	Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Ռաֆֆու «Սամվել» վեպը	2	2
8.	Գր. Զոհրապը և հայ նորավիպագրությունը	2	2
9.	Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը	2	2
10.	Հ. Թումանյան	2	2
11.	Ավ . Իսահակյան	1	2
12.	Վ. Տերյանի քնարերգությունը	2	2
13.	Ե. Չարենցի պոեզիան	2	2

14.	Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/	2	2
15.	Սփյուռք - «Կարոտի» և «Նահանջի» գրականության ուրվագիծ /Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/	2	2
16.	Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ /Հ. Սահյան, Պ. Սևակ, Հր. Մաթևոսյան /	2	2
ԸՆԴԱՄԵՆԸ		28	32

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Վ. Եղիազարյան, Հայ հին գրականության պատմություն	2014
2.	Վ. Եղիազարյան, Հայրեններ	2007
3.	Ա. Եղիազարյան, «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան	1999
4.	Վ. Սաֆարյան, Հայ միջնադարյան գրականություն	2016
5.	Դ. Մուրադյան, Հայ նոր գրականության պատմություն	2021
6.	Վ. Սաֆարյան, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը	2022
7.	Պ. Հակոբյան, Հայ մշակույթի նշանավոր գործիչներ	1976
8.	Է. Ջրբաշյան, Չորս գագաթ	1982
9.	Հայ նոր գրականության պատմություն /հատոր 1-5/	1962-1979
10.	Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն	2016
11.	Ս. Աղաբաբյան, «Սովետահայ գրականության պատմություն»	1965
12.	Հր. Թամրազյան, «Սովետահայ գրականության պատմություն»	1980
13.	Ս.Սարինյան «Հայոց գրականության երկու դարը»	1988, 1989, 2002, 2004, 2009, 2015
✓	Հայ ազգագրություն և բանահյուսություն	1970-2002
✓	Մ. Խորենացի. Պատմություն Հայոց	

✓	Գ. Նարեկացի. Մատյան ողբերգության, Մխիթար Գոշ	
✓	Ռաֆֆի	
✓	Մուրացան.	
✓	Ալ. Շիրվանզադե.	
✓	Ա. Բակունց.	
✓	Հ. Թումանյան.	
✓	Նար-Դոս	
✓	Վ. Տերյան	
✓	Ե. Չարենց	
✓	Ավ. Իսահակյան	
✓	Պ. Սևակ	
✓	Հ. Շիրազ	
✓	Հ. Սահյան	
✓	Հ. Մաթևոսյան	
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	http://publishing.ysu.am/en/home	
2.	www.nla.am	

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

h/h	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն
1.	Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ	Նախամաշտոցյան շրջանի գիր և գրականություն: Գրականության զարգացման հիմնական ուղղությունները և ժանրերը 5-րդ դարում	2	Քննարկում	ՊԳ1, 6

	գրականության ընդհանուր նկարագիր:	/պատմագրություն, հոգևոր երգ, կրոնադավաբանական գրականություն և այլն/: Ոսկեդարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը:			
2.	«Սասնա ծռեր» էպոսը:	ժողովրդական վեպ /«Սասնա ծռեր»/: Էպոսը որպես ժանր, հիմնական գծերը: Հայկական էպոսի ձևավորման ժամանակն ու պատմական նախադրյալները: Էպոսի կառուցվածքն ու բովանդակությունը, գաղափարն ու կերպարները, գեղարվեստական արժանիքները:	2	Քննարկում	ՊԳ3
3.	Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», Ֆրիկ, քնարերգությունը:	Գր. Նարեկացու կյանքն ու ստեղծագործությունը: Տաղեր և գանձեր: «Մեղեդի ծննդյան», «Տաղ Վարդավառի», «Նարեկ» աղոթամատյան: Կառուցվածքն ու գաղափարը: Ֆրիկի կյանքն ու բանքերը: Ֆրիկի քնարերգության նորույթը, սոցիալական, ազգային և համամարդկային բովանդակությունը:	2	Քննարկում	ՊԳ4, 7
4.	Միջնադարյան տաղերգություն, հայրեններ:	Հայրեններ, բառի ստուգաբանության տարբերակներ: Հայրենի չափը, շեշտադրությունը: Հայրենների հիմնական թեմատիկան: Բանասիրական վեճեր Քուչակի հայրենների շուրջ:	1	Քննարկում	ՊԳ4, 2
5.	Խ. Աբովյանը և լուսավորական շարժումը:	Աբովյանի գործունեությունը: Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: «Վերք Հայաստանի» վեպի նորարարական բնույթը, բովանդակությունը, կերպարները, գաղափարը, պատմագեղարվեստական արժեքը:	1	Քննարկում	ՊԳ5, 9
6.	Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը:	Պարոնյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Երգիծանքը որպես իրականության արտացոլման եղանակ, երգիծանքի տեսակները:	1	Քննարկում	ՊԳ5, 9

		«Ազգային ջոջեր» դիմանկարների շարքը՝ կերպարակերտման առանձնահատկություններ: «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի քննարկում:			
7.	Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Ռաֆֆու «Սամվել» վեպը	Ռոմանտիզմի ձևավորման սոցիալ-պատմական նախադրյալները: Գրական մեթոդի հիմնական սկզբունքները և զարգացման համառոտ ակնարկ: Ռաֆֆին պատմավեպի մասին: «Սամվել» պատմավեպի պատկերման ժամանակը, կերպարները, գեղագիտությունն ու առնչությունը արդիականությանը:	2	Քննարկում	ՊԳ5, 9
8.	Գր. Զոհրապը և հայ նորավիպագրությունը:	Գր. Զոհրապի գործունեությունն ու կյանքի հիմնական շրջանները: Նովելը որպես ժանր, հատկանշական կողմերը: Զոհրապի նորավիպագրությունն ու ռեալիստական հայեցողությունը: Իրականության արտացոլման «Կյանքն ինչպես որ կա» սկզբունքի զոհրապյան իրացման ուրույն գծերը:	2	Քննարկում	ՊԳ5, 9
9.	Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը:	Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմի առանձնահատկությունները: «Քառս» վեպի ձևավորման ժամանակն ու ընթացքը, իրական ազդակները: Վեպի վերլուծություն գրական ուղղության սկզբունքների տեսակետից, կերպարների զարգացման ընթացքի պատկերում:	2	Քննարկում	ՊԳ5, 9
10.	Հ. Թումանյան:	Հովհ. Թումանյանի հումանիստական գործունեությունը: Թումանյանի քառյակները /քառյակի ժանրի տեսություն/, դրանց թեմատիկ բազմազանությունն ու խոհական տարաշերտությունը: «Անուշ» պոեմը. բնագիր և վերլուծություն:	2	Քննարկում	ՊԳ5, 8, 9
11.	Ավ . Իսահակյան:	Իսահակյանի պոեզիայի առանձնահատկությունները: Անգիր բանաստեղծություններ: Իսահակյանի նշանավոր	1	Քննարկում	ՊԳ5, 8, 9

		պոեմի ստեղծման պատմությունը, ազդակները, բովանդակությունը, ասելիքը:			
12.	Վ. Տերյանի քնարերգությունը:	Վ. Տերյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: Տերյանի բերած նորույթները՝ բանաստեղծական շարք, բառագանձ: Սիմվոլիզմը որպես Տերյանի քնարերգության կազմակերպման հիմնատարր: Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը: Տերյանի սիրային քնարերգության գոհարները:	2	Քննարկում	ՊԳ5, 8, 9
13.	Ե. Չարենցի պոեզիան:	Ե. Չարենցի պոեզիայի հիմնական հատկանիշները: Վաղ շրջանի պոեզիան: Չարենցի վերջին մատյանը:	2	Քննարկում	ՊԳ5, 8, 9
14.	Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/	Ընդհանուր պատկերացում արևմտահայ պոեզիայի զարգացման մասին: Դուրյանի քնարերգության առանձնահատկությունները: Մեծարենցյան բանաստեղծական ժողովածուները՝ «Ծիածան», «Նոր տաղեր»: Վարուժանի «Հարճը» պոեմի վերաբերյալ քննարկման կազմակերպում:	2	Քննարկում	ՊԳ5, 8, 9
15.	Սփյուռք - «Կարոտի» և «Նահանջի» գրականության ուրվագիծ / Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր, Զահրատ/	Սփյուռքահայ գրականության զարգացման ուղիները՝ կարոտի գրականության ներկայացուցիչները /ակնարկ/, նահանջի գրականության հատկանիշները /Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը: Բնագրի ընթերցում և քննարկման կազմակերպում՝ կերպարների մասնավոր վերլուծություններով:	2	Քննարկում	ՊԳ10
16.	Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ / Հ. Սահյան, Պ. Սևակ, Հր. Մաթևոսյան /	Ավանդներն ու նորարարությունը որպես գրական գործընթացի հիմնական բաղադրիչներ: 20_րդ դարակեսի արևելահայ պոեզիայի առանձնահատկությունները: Սևակի և Սահյանի պոեզիայի գոհարները: Հր.	2	Քննարկում	ՊԳ11, 12, 13

		Մաթևոսյանի «Աշնան արև». քննարկման կազմակերպում:			

12.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Աշխատանքի տեսակը	Ներկայացման ժամկետները / յուրաքանչյուր հանդիպման համար	Ստուգման ձևը	Գրականություն
1.	«Սասնա ծռեր» էպոսը /էպոսի պատումների և համահավաք բնագրի համադրական քննություն/	Ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ3
2.	Ֆրիկի քնարերգության նորույթը	Ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ4, 7
3.	Հայրեններ. բանասիրական վեճեր Քուչակի հայրենների շուրջ	Ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ4, 2
4.	Հ. Պարոնյանի «Ազգային ջոջեր» դիմանկարների շարքը	Ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ5, 9
5.	Գ. Զոհրապի «Կյանքն ինչպես որ է» նովելաշարը	Ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ5, 9
6.	Նար –Դոսի «Պայքար» վեպը	Ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ5, 9, 13
7.	Նար-Դոսի «Մահը» վեպը	Ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ5, 9, 13
8.	Թումանյանի քառյակները /քառյակի ժանրի տեսություն/	Ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ5, 8, 9

9.	Սիմվոլիզմը որպես Տերյանի քնարերգության կազմակերպման հիմնատարր	Ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ5, 8, 9
10.	Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը	Ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ5, 8, 9
11.	Զահրատի բանաստեղծությունը	Ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ10
12.	Համաստեղի պատմվածքները	Ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ10
13.	Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուն	Ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ11, 12, 13
14.	Հրանտ Մաթևոսյանի պատմվածները	Ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Քննարկում	ՊԳ11, 12, 13

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Համակարգիչ, Էկրան, Պրոեկտոր:

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի:

Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով: Դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

14.2. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Նախամաշտոցյան շրջանի գիր և գրականություն:
2. Գրականության զարգացման հիմնական ուղղությունները և ժանրերը 5-րդ դարում /պատմագրություն, հոգևոր երգ, կրոնադավաբանական գրականություն և այլն/:
3. Ոսկեդարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը:
4. Էպոսը որպես ժանր, հիմնական գծերը: Հայկական էպոսի ձևավորման ժամանակն ու պատմական նախադրյալները:
5. Էպոսի կառուցվածքն ու բովանդակությունը, գաղափարն ու կերպարները, գեղարվեստական արժանիքները:
6. Գր. Նարեկացու կյանքն ու ստեղծագործությունը: Տաղեր և գանձեր: «Մեղեդի ծննդյան», «Տաղ Վարդավառի»
7. «Նարեկ» աղոթամատյան: Կառուցվածքն ու գաղափարը:
8. Ֆրիկի կյանքն ու բանքերը: Ֆրիկի քնարերգության նորույթը, սոցիալական, ազգային և համամարդկային բովանդակությունը:
9. Հայրեններ: Հայրենի չափը: Հայրենների հիմնական թեմատիկան:
10. Աբովյանի գործունեությունը: «Վերք Հայաստանի» վեպը
11. Հ. Պարոնյանի «Ազգային ջոջեր» դիմանկարների շարքը՝ կերպարակերտման առանձնահատկություններ:
12. «Մեծապատիվ մուրացկաններ»:
13. Ռաֆֆին պատմավեպի մասին: «Սամվել» պատմավեպի պատկերման ժամանակը, կերպարները, գեղագիտությունն ու առնչությունը արդիականությանը:
14. Զոհրապի նորավիպագրությունն ու ռեալիստական հայեցողությունը:

Իրականության արտացոլման «Կյանքն ինչպես որ կա» սկզբունքի զոհրապյան իրացման ուրույն գծերը:

15. Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմի առանձնահատկությունները:

16. «Քառս» վեպը:

17. Թումանյանի քառյակները, դրանց թեմատիկ բազմազանությունն ու խոհական տարաշերտությունը:

18. «Անուշ» պոեմը:

19. Իսահակյանի պոեզիայի առանձնահատկությունները:

20. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի ստեղծման պատմությունը, ազդակները, բովանդակությունը, ասելիքը:

21. Սիմվոլիզմը որպես Տերյանի քնարերգության կազմակերպման հիմնատարր:

22. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը:

23. Տերյանի սիրային քնարերգությունը:

24. Ե. Չարենցի պոեզիայի հիմնական հատկանիշները: Վաղ շրջանի պոեզիան:

25. Չարենցի վերջին մատյանը:

26. Ընդհանուր պատկերացում արևմտահայ պոեզիայի զարգացման մասին: Դուրյանի քնարերգության առանձնահատկությունները:

27. Մեծարենցյան բանաստեղծական ժողովածուները՝ «Ծիածան», «Նոր տաղեր»:

28. Վարուժանի «Հարճը» պոեմը:

29. Սփյուռքահայ գրականության զարգացման ուղիները՝ կարոտի գրականության ներկայացուցիչները:

30. Սփյուռքահայ գրականության զարգացման ուղիները՝ նահանջի գրականության հատկանիշները:

31. 20_րդ դարակեսի արևելահայ պոեզիայի առանձնահատկությունները: Սևակի և Սահյանի պոեզիայի գոհարները:

32. Հր. Մաթևոսյան. «Աշնան արև»:

<u>Ա) 1-ին ընթացիկ ստուգում</u>

- **Ընդգրկված թեմաները.**

1. Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր նկարագիր
2. «Սասնա ծռեր» էպոսը
3. Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», Ֆրիկ, քնարերգությունը
4. Միջնադարյան տաղերգություն, հայրեններ
5. Խ. Աբովյանը և լուսավորական շարժումը
6. Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը
7. Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Ռաֆֆու «Սամվել» վեպը
8. Գր. Զոհրապը և հայ նորավիպագրությունը
9. Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը

- **Ընդգրկված հարցեր.**
- Նախամաշտոցյան շրջանի գիր և գրականություն:
- Գրականության զարգացման հիմնական ուղղությունները և ժանրերը 5-րդ դարում /պատմագրություն, հոգևոր երգ, կրոնադավաբանական գրականություն և այլն/:
- Ոսկեդարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը:
- Էպոսը որպես ժանր, հիմնական գծերը: Հայկական էպոսի ձևավորման ժամանակն ու պատմական նախադրյալները:
- Էպոսի կառուցվածքն ու բովանդակությունը, գաղափարն ու կերպարները, գեղարվեստական արժանիքները:
- Գր. Նարեկացու կյանքն ու ստեղծագործությունը: Տաղեր և գանձեր: «Մեղեդի ծննդյան», «Տաղ Վարդավառի»
- «Նարեկ» աղոթամատյան: Կառուցվածքն ու գաղափարը:
- Ֆրիկի կյանքն ու բանքերը: Ֆրիկի քնարերգության նորույթը, սոցիալական, ազգային և համամարդկային բովանդակությունը:
- Հայրեններ: Հայրենի չափը: Հայրենների հիմնական թեմատիկան:
- Աբովյանի գործունեությունը: «Վերք Հայաստանի» վեպը
- Հ. Պարոնյանի «Ազգային ջոջեր» դիմանկարների շարքը՝ կերպարակերտման առանձնահատկություններ:

- «Մեծապատիվ մուրացկաններ»:
- Ռաֆֆին պատմավեպի մասին: «Սամվել» պատմավեպի պատկերման ժամանակը, կերպարները, գեղագիտությունն ու առնչությունը արդիականությանը:
- Զոհրապի նորավիպագրությունն ու ռեալիստական հայեցողությունը: Իրականության արտացոլման «Կյանքն ինչպես որ կա» սկզբունքի զոհրապյան իրացման ուրույն գծերը:
- Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմի առանձնահատկությունները:
- «Քառս» վեպը:

<u>Բ) 2-րդ ընթացիկ ստուգում</u>

- **Ընդգրկվող թեմաները.**
  1. Հ. Թումանյան
  2. Ավ . Իսահակյան
  3. Վ. Տերյանի քնարերգությունը
  4. Ե. Չարենցի պոեզիան
  5. Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/
  6. Սփյուռք - «Կարոտի» և «Նահանջի» գրականության ուրվագիծ /Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/
  7. Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ /Հ. Սահյան, Պ. Սևակ, Հր. Մաթևոսյան /

- **Ընդգրկված հարցեր.**
- Թումանյանի քառյակները, դրանց թեմատիկ բազմազանությունն ու խոհական տարաշերտությունը:
- «Անուշ» պոեմը:
- Իսահակյանի պոեզիայի առանձնահատկությունները:
- Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի ստեղծման պատմությունը, ազդակները, բովանդակությունը, ասելիքը:

- Սիմվոլիզմը որպես Տերյանի քնարերգության կազմակերպման հիմնատարր:
- Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը:
- Տերյանի սիրային քնարերգությունը:
- Ե. Չարենցի պոեզիայի հիմնական հատկանիշները: Վաղ շրջանի պոեզիան:
- Չարենցի վերջին մատյանը:
- Ընդհանուր պատկերացում արևմտահայ պոեզիայի զարգացման մասին: Դուրյանի քնարերգության առանձնահատկությունները:
- Մեծարենցյան բանաստեղծական ժողովածուները՝ «Ծիածան», «Նոր տաղեր»:
- Վարուժանի «Հարճը» պոեմը:
- Սփյուռքահայ գրականության զարգացման ուղիները՝ կարոտի գրականության ներկայացուցիչները:
- Սփյուռքահայ գրականության զարգացման ուղիները՝ նահանջի գրականության հատկանիշները:
- 20_րդ դարակեսի արևելահայ պոեզիայի առանձնահատկությունները: Սևակի և Սահյանի պոեզիայի գոհարները:
- Հր. Մաթևոսյան. «Աշնան արև»:

14.3. Ստուգման չափանիշներ:

1. Փաստ(եր)ի կիրառություն:
2. Նյութի կառուցվածք:
3. Թեմայի ընտրություն:
4. Կերպարների ընտրություն:
5. Վերլուծության մակարդակ:
6. Մատուցման ձև:
7. Նյութի կառուցվածք:

14.4. Գնահատման չափանիշները.

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ստուգարքի ժամանակ:
- Գործնական աշխատանքները՝ չորս հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ.:
- Ինքնուրույն աշխատանքը՝ մեկ հարցում՝ 20 միավոր գնահատմամբ:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ 061101.00.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Ինֆորմատիկայի բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2026

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՀԼԳ/բ-032 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-2»**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
	Լսարանային	28	Գործնական աշխատանք	28
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը, խնդիրները	**Դասընթացի նպատակն** է ուսանողների մոտ ձևավորել համակարգային պատկերացում հայ գրականության զարգացման շրջանների և դերի մասին հայ հասարակական մտքի ու արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է. Հասկանա՝ Գրական գործընթացի առանձնահատկությունները: Գրականության ժանրային համակարգն ու գրական հիմնական ուղղությունները: Իմանա՝ Հայ գրողների ստեղծագործական ժառանգությունը: Հայ գրականության զարգացման առանձնահատկությունները: Կարողանա՝ Վերլուծել գրական ստեղծագործությունները: Բացատրել գրականության արժահամակարգային դրսևորումները համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներում: Տիրապետի՝			

	Գրական ստեղծագործության վերլուծության մեթոդներին: Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի հետևյալ կոմպետենցիաները. ԳԿ1. Վերլուծելու և համադրելու ունակություն: ՀԳԿ1. Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն: ԱԿ6. Կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները:
Դասընթացի բովանդակությունը	*Թեմա 1.* Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր նկարագիր *Թեմա 2.* «Սասնա ծռեր» էպոսը *Թեմա 3.* Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», Ֆրիկ, քնարերգությունը *Թեմա 4.* Միջնադարյան տաղերգություն, հայրեններ *Թեմա 5.* Խ. Աբովյանը և լուսավորական շարժումը *Թեմա 6.* Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը *Թեմա 7.* Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Ռաֆֆու «Սամվել» վեպը *Թեմա 8.* Գր. Զոհրապը և հայ նորավիպագրությունը *Թեմա 9.* Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը *Թեմա 10.* Հ. Թումանյան *Թեմա 11.* Ավ . Իսահակյան *Թեմա 12.* Վ. Տերյանի քնարերգությունը *Թեմա 13.* Ե. Չարենցի պոեզիան *Թեմա 14.* Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/ *Թեմա 15.* Սփյուռք - «Կարոտի» և «Նահանջի» գրականության ուրվագիծ /Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/ *Թեմա 16.* Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ /Հ. Սահյան, Պ. Սևակ, Հր. Մաթևոսյան /
Գնահատման մեթոդները և	• Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական

չափանիշները	պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ստուգարքի ժամանակ: • Գործնական աշխատանքները՝ չորս հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ: • Ինքնուրույն աշխատանքը՝ մեկ հարցում՝ 20 միավոր գնահատմամբ:
Գրականություն	**Պարտադիր** 1. Վ. Եղիազարյան, Հայ հին գրականության պատմություն 2. Վ. Եղիազարյան, Հայրեններ 3. Ա. Եղիազարյան, «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան 4. Վ. Սաֆարյան, Հայ միջնադարյան գրականություն 5. Դ. Մուրադյան, Հայ նոր գրականության պատմություն 6. Վ. Սաֆարյան, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը 7. Պ. Հակոբյան, Հայ մշակույթի նշանավոր գործիչներ 8. Է. Ջրբաշյան, Չորս գագաթ 9. Հայ նոր գրականության պատմություն /հատոր 1-5/ 10. Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն 11. Ս. Աղաբաբյան, «Սովետահայ գրականության պատմություն» 12. Հր. Թամրազյան, «Սովետահայ գրականության պատմություն» 13. Ս.Սարինյան «Հայոց գրականության երկու դարը»